ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂԻՆ՝ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՉՈՐՐՈՐԴ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ (ԶՐԿՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԵԿ ՏԱՐՈՎ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԵՎ/ԿԱՄ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(ADDRESSEE)

Վարչաշրջան՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____
Մատակարարողի անունը՝ _____
IHSS գրասենյակի հասցեն՝ _____
_____
IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) ստացողին

Ձեր մատակարարողը՝ _____, չորրորդ խախտումն է ստացել
ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՆՈՒՆԸ

_____ սպասարկման ամսում՝ անելով հետևյալից մեկը կամ ավելին.
ԱՄԻՍ

- ☐ Աշխատել է 40 ժամից ավել աշխատանքային շաբաթում ձեզ համար՝ առանց վարչաշրջանի հավանության, երբ ձեր առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ ավելի քիչ:
- ☐ Աշխատել է ձեր առավելագույն շաբաթական ժամերից ավել՝ առանց վարչաշրջանի հավանության, և դրա հետևանքով նա ավելի շատ արտաժամյա աշխատանք է կատարել ամսվա ընթացքում, քան սովորաբար կաներ:
- ☐ Աշխատել է ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, երբ նա աշխատում է մեկից ավել ստացողների համար:
- ☐ Հայցել է յոթ (7) ժամը գերազանցող ճամփորդության ժամանակ մեկ աշխատանքային շաբաթում:

Դրա հետևանքով ձեր մատակարարողն իրավասու չի լինի IHSS ծրագրի կողմից վճարվել հաստատված IHSS ծառայություններ տրամադրելու համար ձեզ կամ որևէ այլ IHSS ստացողին մեկ տարվա ընթացքում:

Դուք պետք է նոր մատակարարող գտնեք այս ծանուցման ամսաթվից քսան (20) օրացուցային օրվա ընթացքում: Այս քսան օրվա ընթացքում ձեր ներկա մատակարարողը դեռ կշարունակի ձեզ ծառայություններ տրամադրել: Եթե ձեզ օգնություն է հարկավոր նոր մատակարարող գտնելու հարցում, խնդրում ենք դիմել ձեր IHSS գրասենյակ վերանշյալ հեռախոսահամարով: